ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի հոկտեմբերի 10- 12-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Հակոբ Ավագյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի հոկտեմբերի 10-12-ը

4. **Հրավիրող կողմը՝**

ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն, Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության միջև համատեղ աշխատանքային խմբի կողմից մշակված՝ Ճանապարհային քարտեզի ստորագրում և առաջին նիստի անցկացում,
- Ս.թ. հոկտեմբերի 22-24-ը Երևանում «Եվրասիական շաբաթ» ցուցահանդեսային համաժողովի նախապատրաստական հարցերի քննարկում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում,
- Մոսկվայի «ՎԴՆԽ» ցուցահանդեսային համալիրում հայկական տաղավարի աշխատանքների ակտիվացում և հայկական ապրանքների ներկայացվածության ընդլայնում,
- Այցելություն «Ագրոսալոն - 2018» գյուղատնտեսական մեքենաշինության ցուցահանդեսին և մասնակցություն «կլոր սեղանին»:

6. **Քննարկված թեմաները**

- ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարությունում

ՀՀ և ՌԴ արդյունաբերական կազմակերպությունների համագործակցության ընդլայնում, այդ թվում՝ կոոպերացիոն, ինչպես նաև ներմուծման փոխարինման ծրագրերում հայկական ընկերությունների ընդգրկման հնարավորություններ:

- *Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝*

«Եվրասիական շաբաթ» ցուցահանդեսային համաժողովի անցկացման նախապատրաստական աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծում:

- *«Մոսկվայի «ՎԴՆԽ» ցուցահանդեսային համալիրում՝*

Հայկական տաղավարի աշխատանքների ակտիվացում և հայկական ապրանքների ներկայացվածության ընդլայնում:

- «Ագրոսալոն - 2018» ցուցահանդեսում՝

Հայկական ապրանք արտադրողներին ռուսական շուկա մուտք գործելու և նրանց ապրանքները ճանաչելի դարձնելու աջակցություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

- Ս.թ. հոկտեմբերի 10-ին՝
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր, որով կողմերը նախատեսում են համատեղ աշխատանքային խմբի միջոցով՝ նպաստել ՌԴ և ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների միջև կոոպերացիոն նախագծերի իրականացմանը:
- Այցելություն ՌԴ-ում ՀՀ դեսպանատուն, որտեղ դեպանի և առևտրային ներկայացուցչի հետ քննարկվեց հայկական ապրանքների ներկայացվածության ընդլայնման ուղիները:
- Ս.թ. հոկտեմբերի 11-ին՝
- «Ագրոսալոն-2018» ցուցահանդեսին ռուսական գյուղատնտեսական տեխնիկայի արտադրող ընկերությունների հետ քննարկվեցին ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության կենտրոն հիմնելու պետություն—մասնավոր հատված բիզնես մոդելի հնարավորությունները:
- Ս.թ. հոկտեմբերի 12-ին՝
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ԵՏՀ նախարար Վերոնիկա Նիկիշինայի հետ քննարկվեցին մի շարք կազմակերպչական հարցեր, այդ թվում, սույն թվականի հոկտեմբերի 22—24 ը Երևանում կայանալիք «Եվրասիական տնտեսական շաբաթ» ցուցահանդեսի հետ կապված նախապատրաստական աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրները և առաջարկվել են համապատասխան լուծումներ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը**

- ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարությունում՝
  Ստորագրվել է Ճանապարհային քարտեզը և պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկայացնել առաջարկություններ կոոպերացիոն նախագծերի ներկայացման և քննարկման ուղղությամբ:
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝

Պայմանավորվածություն է ձեռքբերվել մեկշաբաթյա ժամկետում վերացնել նախապատրաստական աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրները և խոչընդոտները:

- «Մոսկվայի «ՎԴՆԽ» ցուցահանդեսային համալիրում՝

Պայմանավորվածություն է ձեռքբերվել իրականացնել միջոցառումներ հայկական տաղավարի ապրանքների տեսականու ընդլայնման ուղղությամբ

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Նախատեսվում է՝

- Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախանշված ոլորտների արտահանման ծավալների

ավելացման նպատակով՝ ներկայացնել ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն կոոպերացիոն նախագծեր,

- Ընդլայնել հայկական տաղավարի տեսականին մրցունակ ապրանքատեսակներով,
- Ուսումնասիրել ՌԴ ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության կենտրոն հիմնելու պետություն—մասնավոր հատված բիզնես մոդելի հնարավորությունները:

Նշված առաջարկությունների իրականացման արդյունքում ակնկալվում է՝

- Կոոպերացիոն ծրագրերի իրականացման արդյունքում ստեղծել նոր աշխատատեղեր, ավելացնել արտահանման ծավալները:
- Բարձր մակարդակով անցկացնել «Եվրասիական շաբաթ» համաժողովը:
- Ստեղծել նպաստավոր պայմաններ գյուղացիական տնտեսությունների համար հողի մշակման համար:

10. Գործուղվողը

Հակոբ Ավագյան

17.10.2018թ.